«Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»

ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» 1995 թվականի նոյեմբերի 6-ի ՀՕ-16 օրենքի (այսուհետ՝ օրենք) 13-րդ հոդվածի՝

1) 2-րդ մասի 1-ին կետում «երեխա» բառից հետո լրացնել «(զավակ)» բառը.

2) 9-րդ մասում լրացնել նոր նախադասություն հետևյալ բովանդակությամբ՝

«Երդման արարողությանը մասնակցելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիր ստանալու համար Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացած անձը Հայաստանի Հանրապետությունում գտնվելու դեպքում ներկայանում է Հայաստանի Հանրապետության ոստիկանություն, իսկ օտարերկրյա պետությունում գտնվելու դեպքում՝ Հայաստանի Հանրապետության համապատասխան դեսպանություն կամ հյուպատոսական հիմնարկ:».

3) 11-րդ մասը ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 2. Օրենքի 17-րդ հոդվածի՝

- 3-րդ և 4-րդ մասերը ճանաչել ուժը կորցրած.
- 5-րդ մասում «հիման վրա» բառերից հետո լրացնել «(14-18 տարեկան երեխայի դեպքում ներկայացվում է նաև երեխայի գրավոր համաձայնությունը)» բառերը:

Հոդված 3. Օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի `

- 2-րդ կետը ճանաչել ուժը կորցրած.
- 3-րդ կետում «ազգային անվտանգության» բառերը փոխարինել «պետական անվտանգության» բառերով.
- 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4) ունի «Պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված՝ պետության հանդեպ չկատարված պարտավորություններ՝ մասնավորապես,

ա) տվյալ տարվա ընթացքում լրանում է արական սեռի քաղաքացու 16 տարին և վերջինս պետք է կատարի զինվորական հաշվառման կանգնելու իր պարտականությունը.

բ) ունենալով զինվորական հաշվառում չի զորակոչվել պարտադիր զինվորական ծառայության կամ չի հաշվառվել զինված ուժերի պահեստազորում.

գ) հաշվառված է զինված ուժերի պահեստազորում, սակայն ունի օրենքով սահմանված բժշկական վերափորձաքննություն անցնելու պարտականություն.

դ) քաղաքացիության դադարեցման մասին դիմումի քննարկման ժամանակահատվածում ընդգրկված է կազմակերպվող վարժական հավաքներին կամ զինվորական վարժանքներին.

ե) դիմումի քննարկման ժամանակահատվածում հայտարարվել կամ գործում է ռազմական դրության իրավական ռեժիմ.»:

Հոդված 4. 27-րդ հոդվածի

1) 1-ին մասում «դիվանագիտական ներկայացուցչություն» բառերը փոխարինել «դեսպանություն» բառով։

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 3.1 մասով.

«3.1. Սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված դիմումների քննարկման ընթացակարգը չի տարածվում ազգությամբ հայերի կողմից Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու հետ կապված հարաբերությունների վրա։ Ազգությամբ հայերի՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերելու դիմումների քննարկման արդյունքում Հայաստանի Հանրապետության ոստիկանության կազմած եզրակացությունները երկամսյա ժամկետում ներկայացվում են Հայաստանի Հանրապետության վարչապետին՝ առանց Քաղաքացիության հարցերով միջգերատեսչական հանձնաժողովի եզրակացությունը ստանալու։».

3) 4-րդ մասում «եզրակացություններն» բառից հետո լրացնել «, իսկ սույն հոդվածի 3.1. կետով նախատեսված դեպքերում՝ Հայաստանի

Հանրապետության ոստիկանության կազմած եզրակացությունները» բառերը։

Հոդված 5. Օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին նախադասությունում «ժամկետում» բառից հետո լրացնել «,բացառությամբ ազգությամբ հայերի կողմից Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու դիմումների, որոնք քննարկվում են եռամսյա ժամկետում» բառերը։

Հոդված 6. Օրենքի ողջ տեքստում «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանություն» բառերը և դրանց համապատասխան հոլովաձևերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության ոստիկանություն» բառերով և դրանց համապատասխան հոլովաձևերով։

Հոդված 7. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից վեց ամիս հետո։